[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
3	Դեկտեմբեր	2018 թ.		Բ	3132349486
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
3	Դեկտեմբեր	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի									
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)		2	3	2	3	0	2	8	1
[9] Անվանումը	ՔՆԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ)								
[10] Բանկային տվյալները	ՀԷԲ	N 163005463282							
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍՆՈՐՔ 5 Փ. 7/1								
[12] Լրացուցիչ տվյալներ	Երևան Նորք-Մարաշ թաղամաս Նորք 5 փող,7/1 տ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի									
[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)		0	2	6	3	1	2	6	3
[14] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ								
[15] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխ,Գործ,	N 900011000834							
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5								
[17] Լրացուցիչ տվյալներ	Երևան Մամիկոնյանց թ.46/5								
[18] Ում միջոցով	Անուն, ազգանուն								
	Լիազորագիր	Համար							
		Ամսաթիվ							

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	քր.գործ6120117(Մետեքսիմ ՍՊԸ) կազմվել են աղյուսակներ, տրվել է կարծիք	1	1	170000	170000
Ընդամենը					170000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ SARGSYAN KNARIK 7908530079

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

03/12/2018 11:19:52

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
մասնագիտական ստուգում նշանակելու մասին

06 օգոստոսի 2018թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության պետի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ա.Մ.Սարգսյանս, վերանայելով վարույթիս թիվ 61209117 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

<<Սիվիլնեթ>> լրատվական կայքէջում <<Երևան-Բաքու երկաթգծի՝ Արաքսի հատվածը՝ թալանված>> վերտառությամբ հրապարակման հիման վրա <<Դատախազության մասին>> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված լիազորությունների շրջանակներում իրականացված ուսումնասիրություններով պարզվել է, որ թեև ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և <<Հարավկովկասյան երկաթուղի>> փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված կոնցեսիոն պայմանագրի հիման վրա 01.06.2008թ. հանձնման-ընդունման ակտերի համաձայն՝ Երևան-Բաքու երկաթգծի՝ Մեղրի-Կապան հատվածը՝ շուրջ 40 կմ. երկարությամբ, հանձնվել է ընկերությանը 126.590.817 դրամ մնացորդային արժեքով, սակայն 2003-2010 թվականների ընթացքում երկաթգծի նշված հատվածն ամբողջությամբ ապամոնտաժվել և հափշտակվել է անհայտ անձանց կողմից:

Դեպքի առթիվ ՀՀ գլխավոր դատախազությունում 2017 թվականի նոյեմբերի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 61209117 քրեական գործը և նախաքննությունը շարունակելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային վարչություն:

2018 թվականի հուլիսի 16-ին թիվ 61209117 քրեական գործը ՀՀ գլխավոր դատախազությունից ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ ՀԿԳ քննության վարչություն և 2018 թվականի հուլիսի 17-ին ընդունվել վարույթ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում տվյալներ են ստացվել այն մասին, որ 2010 թվականի օգոստոսի 26-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի ՊԺԿ Վ.Հովհաննիսյանի կողմից զեկուցագիր է ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարին այն մասին, որ երկաթգծի ռելսերի ապամոնտաժման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է <<Մեղրիի ՃՇՇՁ>> ԲԲ ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանի հետ կնքել պայմանագիր՝ նկատի ունենալով, որ ապամոնտաժված ռելսերի քաշը կկազմի շուրջ 3.000 տոննա, ապա ՊՆ-ին վճարվող գումարը կկազմի շուրջ 200.000.000 ՀՀ դրամ:

2017 թվականի սեպտեմբերի 2-ին ՀՀ պաշտպանության նախարարության՝ ի դեմս պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ալիկ Ռազմիկի Միրզաբեկյանի, և <<Մեղրիի ՃՇՇՁ>> ԲԲ ընկերության՝ գործադիր տնօրեն Ազատ Բենյամինի Գասպարյանի միջև կնքվել է աշխատանքների կատարման պայմանագիր, որով Ազատ Գասպարյանը պարտավորվել է պատվիրատուի համար կատարել շուրջ 3.000 տոննա ռելսերի ապամոնտաժման աշխատանքներ՝ 23.100.000 ՀՀ դրամի դիմաց:

Տվյալներ են ստացվել նաև այն մասին, որ 2010-2012թթ ընթացքում <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերությունը որպես սև մետաղի ջարդոն ՀՀ-ից արտահանել է օգտագործված ուղեգծեր, ուստի 2018 թվականի հուլիսի 30-ին որոշումներ են կայացվել ընկերության հարկային և մաքսային գործերի առգրավում կատարելու մասին:

2018 թվականի օգոստոսի 2-ին առգրավվել են <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության հարկային և մաքսային գործերը:

<<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության հարկային գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ հարկային գործում առկա են տեղեկություններ 2011-2012թթ ընթացքում ընկերության կողմից Իրանի Իսլամական Հանրապետություն <<սև մետաղի ջարդոն (օգտագործված ուղեգծերից)>> տեսակի նյութական միջոցն արտահանելու վերաբերյալ, որի ընդհանուր քանակը կազմել է շուրջ 3.518.000 կգ., մինչդեռ նույն ընկերության մաքսային գործում եղած փաստաթղթերի ուսումնասիրությամբ նշված նյութական միջոցի արտահանման վերաբերյալ տեղեկություններ չհայտնաբերվեցին, միայն առկա է ընկերության լիազոր ներկայացուցչի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետին հասցեագրված գրություններ, համաձայն որոնց՝ ի թիվս այլ նյութական միջոցների ընկերությունն արտահանել է պողպատե ուղեգծերի ջարդոն:

Այսպիսով՝ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել պարզել <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության կողմից արտահանված <<երկաթգծի>>, այդ թվում՝ <<սև մետաղի ջարդոն (օգտագործված ուղեգծերից)>> տեսակի նյութական միջոցի, ձեռք բերման աղբյուրը, այն վաճառքի արդյունքում ստացված գումարը և քրեական գործով նշանակություն ունեցող այլ հանգամանքներ, որպիսիք պարզելու համար անհրաժեշտ է մասնագիտական գիտելիքների տիրապետող, քրեական գործով չշահագրգռված անձի աջակցություն, ուստի վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ, 12-րդ կետերով և 84-րդ հոդվածով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Թիվ 61209117 քրեական գործով նշանակել մասնագիտական ստուգում, որի կատարումը հանձնարարել որպես մասնագետ նշանակված Ա/Ձ Քնարիկ Ռուբենի Սարգսյանին (ծնված 29.08.1953թ., բնակվում է ք.Երևան, Նորք, 5-րդ փողոց տուն 7/1):

Մասնագետի լուծմանն առաջադրել հետևյալ հարցերը.

1. <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության ֆինանսատնտեսական հաշվետվությունները կազմվել են արդյոք հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի պահանջների համաձայն, թե՝ ոչ:

2. <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության կողմից <<երկաթգիծ>>, այդ թվում՝ <<սև մետաղի ջարդոն (օգտագործված ուղեգծերից)>>, տեսակի նյութական միջոցը ձեռք բերվել է, թե՝ ոչ, եթե այո, ապա երբ, կոնկրետ որ ամսին, ումից և ինչպիսի փաստաթղթերի հիման վրա, կազմված փաստաթղթերը համապատասխանում են այդ կապակցությամբ գործող իրավական ակտերի պահանջներին, թե՝ ոչ, եթե ոչ, ապա հատկապես որ պահանջին չի համապատասխանում:

3. Որքան է կազմում <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության կողմից ձեռք բերված <<երկաթգիծ>>, այդ թվում՝ <<սև մետաղի ջարդոն (օգտագործված ուղեգծերից)>>, տեսակի նյութական միջոցի քանակը՝ ըստ տարիների, ամիսների և օրերի:

4. Որքան է կազմում <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության կողմից ձեռք բերված <<երկաթգիծ>>, այդ թվում՝ <<սև մետաղի ջարդոն (օգտագործված ուղեգծերից)>>, մեկ կիլոգրամի արժեքը:

5. <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության կողմից ձեռք բերված <<երկաթգիծ>>, այդ թվում՝ <<սև մետաղի ջարդոն (օգտագործված ուղեգծերից)>>, տեսակի նյութական միջոցն ինչպես է տնօրինվել, այն վերավաճառվել է, թե՝ ոչ, եթե այո ապա երբ, որ կազմակերպությանը, ինչ հիմքով, որքան է կազմել վաճառված նյութական միջոցի մեկ կիլոգրամի արժեքը:

6. <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության կողմից <<երկաթգիծ>>, այդ թվում՝ <<սև մետաղի ջարդոն (օգտագործված ուղեգծերից)>>, նյութական միջոցն արտահանելու կապակցությամբ ընկերության մաքսային գործում փաստաթղթեր կան, թե՝ ոչ, եթե այո, ապա դրանք կազմվել են սահմանված պահանջներին համապատասխան, թե՝ ոչ:

7. Ըստ <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության մաքսային գործի՝ որքան է կազմել ընկերության կողմից արտահանված <<երկաթգիծ>>, այդ թվում՝ <<սև մետաղի ջարդոն (օգտագործված ուղեգծերից)>>, տեսակի նյութական միջոցի քանակը՝ ըստ տարիների, ամիսների և օրերի:

8. <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության հարկային և մաքսային գործերում <<երկաթգիծ>>, այդ թվում՝ <<սև մետաղի ջարդոն (օգտագործված ուղեգծերից)>>, տեսակի նյութական միջոցի քանակի վերաբերյալ տեղեկությունները համընկնում են, թե՝ ոչ:

9. <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության կողմից <<երկաթգիծ>>, այդ թվում՝ <<սև մետաղի ջարդոն (օգտագործված ուղեգծերից)>>, տեսակի նյութական միջոցի իրացման արդյունքում ընկերությունը որքան շահույթ է ստացել:

10. <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության կողմից ՀՀ բյուջեի հանդեպ ունեցած հարկային և մաքսային պարտավորությունները պատշաճ են կատարվել, թե՝ ոչ, եթե ոչ, ապա դրանց արդյունքում որքան վնաս է հասցվել ՀՀ-ին:

11. <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության կողմից ապրանքատեսակների արտահանման վերաբերյալ փաստաթղթերը համապատասխանում են այդ կապակցությամբ գործող իրավական ակտերի պահանջներին, թե՝ ոչ, եթե ոչ, ապա հատկապես որ պահանջին չի համապատասխանում:

12. ՀՀ պաշտպանության նախարարությունն ինչ հիմքով է 2017 թվականի սեպտեմբերի 2-ին պայմանագիր կնքել Ազատ Գասպարյանի հետ, այն դեպքում, երբ վերջինս ըստ պայմանագրի հանդիսացել է ֆիզիկական անձ:

Մասնագետին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չեն առաջադրվել, սակայն կարող են առաջանալ ստուգման ժամանակ:

Մասնագետին տրամադրել քրեական գործի թվայնացված նյութերը, <<Մետէքսիմ>> ՍՊ ընկերության հարկային և մաքսային գործերը:

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ ՀԿԳ քննության վարչության պետի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական **Ա.Մ.Սարգսյան**